Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 395 - Ա
որոշման

«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ» ՋՐԱՆՑՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում ոռոգման համակարգի վերականգնման և բարելավման նպատակով նախատեսվում է իրականացնել «Սպանդարյան»-ի ջրանցքի վերակառուցման շինարարական աշխատանքները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456):
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնք, ջրամատակարարում:
6.	Ծրագրի բյուջեն	172,378,554 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հունիսի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է վերակառուցել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Սպանդարյան»-ի ջրանցքի ՆԿ0+00-ՆԿ58+00 հատվածը: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում՝ 169,663,931 դրամի չափով: 2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Սպանդարյանի» ջրանցքի ՆԿ0+00-ՆԿ58+00 հատվածի վերակառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում՝ 1,696,639 դրամի չափով: 3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Սպանդարյան» ջրանցքի ՆԿ0+00-ՆԿ58+00 հատվածի վերակառուցման շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում՝ 1,017,984 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Նախատեսվում է իրականացնել «Սպանդարյան» ջրանցքի ՆԿ0+00-ՆԿ58+00 հատվածի հողային, բետոնային աշխատանքներ, շինարարական կարերի մշակում, ջրթողների իրականացում, ջրատարի վրայի կամուրջների նորոգում և վթարային ջրթողների կառուցման աշխատանքների իրականացում՝ 169,663,931 դրամի չափով: 2) Շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 1,696,639 դրամի չափով: 3) Շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում՝ 1,017,984 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

02.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ